

*ԱՆԱԿՏ ԶԱԶԱՐՅԱՆ-ԲՈՆՆԵՆՄԻԵԿԵՐ*

## ՄԽԻԹԱՐՅԱՆ ԲՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ԲԱԶՄԱՎԵՊԻ» ԱՌԱՋԻՆ ՇՐՋԱՆԸ

Մեր մատենագրությունում Ոսկեդարյան շրջանից եկող և «Արտաքին» անվանվող բնական գիտությունների մոր վերածնունդը հայ իրականությունում պայմանավորված է Մխիթարյանների գործունեությամբ:

Մխիթար Սեբաստացին, մեծապես կարևորելով բնական գիտությունները, ինքը դարձավ այդ առարկաների ծրագրերի առաջին կազմողն ու դասավանդողը մորաստեղծ միաբանությունում:

Բնական գիտությունների ուսուցանումը և ձեռնարկների, գրքերի ու հոդվածների մխիթարյան հրատարակությունների մպատակը բնականաբար ոչ թե գիտական այդ ուղղությունների զարգացումն ու նրանցով զբաղվելն էր հայկական միջավայրում, այլ այդ գիտությունները համարամտչելի ներկայացնելը:

Այս բնագավառում Մխիթարն ինքը կատարելով առաջին քայլը, որպես մաթեմատիկայի և ընդհանրապես բնագիտության դասագիրք՝ վերաշարադրում է ԺԸ դարի առաջին քառորդի հայ իրականության համրագիտակ ընդգրկում գիտելիքների տեղ անձնավորության<sup>1</sup> խաչատուր Էրզրումեցու 1711 թ. վեցնեխկում հրատարակած երկհատոր «Համառոտական իմաստասիրութիւն» չափածո գործի համապատասխան բաժինները<sup>1</sup>:

Մխիթարի հաջորդները, հետևելով իրենց ուսուցչի և միաբանության հիմնադրի օրինակին, հայագիտական ուսումնասիրություններին զուգահեռ, ժողովրդի մեջ եվրոպական գիտությունը տարածելու համար, հայկական միջավայրի լուրահատկությունների հաշվառմամբ մատչելի լեզվով ու ոճով վերաշարադրեցին բնագիտությանն ու ժամանակի կիրառական նշանակություն ունեցող գյուտերին ու հայտնագործություններին վերաբերվող մի շարք գործեր<sup>2</sup>: Թե ինչ խնդիրներ էին դնում Մխիթարյաններն իրենց առջև մյուս հրատարակություններով, երևում է այդ գրքերի առաջաբաններից և հեղինակային խոսքերից: Ասվածը հավաստելու համար անդրադառնանք դրանցից մի քանիսին:

1878 թ. վեցնեխկում լույս է տեսնում մխիթարյան հայրերից Սուքիաս Աղամալյանի «Թուաբանութիւնը», որում ներկայացվում են պարզ ու միջին բարդություն ունեցող թվաբանական և մաթեմատիկական գործողություններն ու հաշվումները: Գրքի առաջաբանում հեղինակն ասում է, որ Մխիթարյաններն իրենց առջև խնդիր են դրել արտաքին գի-

<sup>1</sup> Այս մասին տե՛ս Հ. Պ. Համելյան, Մխիթար Արքաճոր «Թաղազս մաթեմատիքայի» դասագիրքը և անոր նշանակութիւնը, «Բազմավեպ», 1949 թ., էջ 222:

<sup>2</sup> Մխիթարյանների բնագիտական բնույթի աշխատանքների մասին տե՛ս Ա. Փաշայան, Մխիթարյանների բնագիտական հրատարակությունները ԺԸ-ԺԹ դարերում, «Բազմավեպ», 2001 թ., էջ 333-350:

տությունների վերաբերյալ գրքեր հրատարակել, սակայն չեն սկսում բարդերից, այլ այնպիսիներից, որոնք դեպ մասն բարդերն են տալիս<sup>3</sup>:

Այնուհետև յոթ տարի անց, դարձյալ միսիթարյան հայրերից Խաչատուր Սյուրմեյանի աշխատասիրությամբ լույս է տեսնում թվաբանության առավել համառոտ և աշխարհաբար մի տարբերակը: Այս գրքի առաջաբանում հեղինակը, ակնարկելով Աղամալյանի գործը, գրում է. «Թեպետ մեր ազգին մեջ տպած գրաբառ թուաբանություն մը ելաւ, որ երկար ու տեղն ի տեղը թուաբանական արհեստին վրայ լաւապէս գրուած է, բայց գրաբառ ըլլալով» շատերը չեն կարողանում հասկանալ կամ ճիշտ ընթանել, և ինքը թվաբանության մի մոր ձեռնարկ է գրում աշխարհաբարով<sup>4</sup>:

Այսպիսով, բնական գիտությունների պարագայում իսկ Միսիթարյանները հետապնդում են լեզվական միևնույն քաղաքականությունը՝ քաղաքացիության իրավունք տալ աշխարհաբարին, այն դարձնելով միջոց գրաբարին հասու լինելու:

Միսիթարյան բնագիտությունը, որ ուղղված էր այս գիտությունների ոչ թե հետազոտությանը, այլ ճանաչողությանը, երևում է մահ 1794 թվականին Հ. Սահակ Պրոմյանի «Երկրաչափությունից»: Գրքի առաջաբանում, խոսելով երկրաչափության կիրառական մշակակության մասին թե՛ ճանապարհորդելու և մավագնացության ընթացքում, և թե՛ տեղագրական ու շինարարական աշխատանքներում, հեղինակը շեշտում է, որ «առաջին բան մեր և դիտաւորութիւն լընծայել ի լոյս գալս, ոչ է ճորանոր դիտիւ կամ լաւելուածով ճոխացուցանել զգիտութիւնս»: Այսինքն, իր մպատակը չի եղել այս բնագավառում մոր խոսք ասելը, այլ «հեշտընկալ բացատրութեամբ աւանդել գալս», որպէսզի անհրաժեշտության դեպքում ընթերցողը կարողանա կիրառել այն<sup>5</sup>:

Միսիթարյան ուսումնական և հանրագիտարանային այս հրատարակությունները տեւեցին շուրջ մեկ դար՝ մինչև 19-րդ դարի վերջը: Ազգային առաջադիմության և ժամանակին համաքայլ ընթանալու գործում բնական գիտություններին ընծայված այս կարևորությունն իր անդրադարձն ունեցավ մահ «Բազմավեպում»:

Այստեղ անհրաժեշտ է նշել մի էական հանգամանքի մասին, որը բնորոշ էր ընդհանրապէս այդ շրջանի հայ մամուլին: Թեև լրագրության գլխավոր մպատակը լրատվության հաղորդումն է, սակայն մինչև 19-րդ դարի վերջին քառորդը լույս տեսած պարբերականների մատենագրական մկարագրությունն իսկ վկայում է, որ այդ շրջանի հայ մամուլի համար առաջնայինն այն չի եղել, որը, կարծում ենք, բացատրվում է երկու պատճառով: Նախ, որ մինչև 1878 թ. ռուս-թուրքական պատերազմը, երբ հայկական հարցը միջազգայնացվեց, հայ կյանքում շեշտված ազգային-քաղաքական հոսանքներ և ուղղություններ չկային, և հայությունն ավելի շատ ներքին համայնքային ամփոփ կյանքով էր ապրում, ուստի աշխարհի քաղաքական իրադարձություններին անմիջական արձագանքն այնքան էլ էական չէր:

<sup>3</sup> Հ. Ս. Աղամալեանց, Թուաբանութիւն, 1781 թ., էջ 4:

<sup>4</sup> Խ. Սիւրմեյան, Համառոտ թուաբանութիւն աշխարհաբառ, Վենետիկ, 1888 թ.: Տե՛ս Հայ գիրքը 1512-1800 թվականներին, էջ 606:

<sup>5</sup> Հայ գիրքը 1512-1800 թվականներին, էջ 692:

Երկրորդ՝ հատկապես մինչև 19-րդ դարի երկրորդ կեսը հայկական պարբերականները լույս էին տեսնում առավելաբար գաղթաշխարհի մի քանի կենտրոններում, և թե՛ մրանց հրատարակության պարբերական հաճախականությունն էր փոքր և թե՛ մինչ արևմտահայ ու արևելահայ իրենց բաժանորդներին էին հասնում, արդեն բավականին ժամանակ էր անցած լինում, և հայ մամուլով չէ, որ ընթերցողները պետք է տեղեկանային կատարված իրադարձությունների մասին:

Որ ժամանակի հայ մամուլն իր առջև հատուկ խնդիր չէր դնում ամմիջապես հաղորդելու տեղի ունեցած իրադարձությունների մասին, երևում է հենց «Բազմավեպի» օրինակով: Վերջինս թեև առաջին շրջանում լույս էր տեսնում 15-օրյա պարբերականությամբ, սակեւրջինս առաքման ծախսերը շատ թանկ չլինեին, մի շարք տեղեր բաժանորդներին կայն որպեսզի առաքման ծախսերը շատ թանկ չլինեին, մի շարք տեղեր բաժանորդներին ուղարկվում էր եռամսյա կամ վեցամսյա կազմված համարներով: Այսինքն, կարևորը մրանց հաղորդած ընդհանուր տեղեկություններն էին և ոչ թե լուրերը:

Ահա այս պատճառով է, որ 1840-ական թթ. խոտվահույզ Եվրոպայում «Բազմավեպը» հոդվածներ էր տպագրում ոչ թե կատարվող իրադարձությունների, այլ որոշակի ընդհանրացվածությամբ գրում արդեն կատարված և ինչ-որ տեղ իրենց կմիջը թողած դեպքերի մասին:

Նշված այս պատճառներով Միսիթարյանները լրագրությունում սկսում են կարևորել ոչ թե տեղի ունեցած իրադարձությունները մերկայացնելը, այլ տեղեկությունները եվրոպական կյանքի մասին:

Ամսագրի անվանաթերթի ամբողջական անվանումից իսկ՝ «Բազմավեպ. օրագիր բնական, տնտեսական և բանասիրական գիտելեաց», երևում է, որ այն առաջին հերթին մվիրված է ժամանակի գիտություններին և կյանքում դրանց կիրառության լուսաբանմանը, որը շեշտվում է մաս ամսագրի առաջին համարի խմբագրականում:

«Բազմավեպի» կարևոր նպատակներից մեկը համարելով եվրոպական կյանքի առաջադիտությանը հայությանը ծանոթացնելը, այնուհետև ամսագրի խմբագիր Հ. Գաբրիել Այվազովսկին ասում է, որ եվրոպացիների օրինակով արևելյան ազգերն էլ են ձգտում առաջադիտության մույն ճանապարհով ընթանալ, այդ թվում մաս հայերը:

Այվազովսկին գրում է, որ ամսագրի նպատակն է «համառօտ» պարզ ու զուարճալի ոճով հասկցնել մեր ազգին, թե հիմա Եվրոպային մէջ որչափ կամ ինչ կերպով առաջ կերթան ամեն տեսակ ուսմունքը, ինչ մոր գիտելով ծաղկած են արհեստները, ինչ օգտակար տեղեկութիւններ կան աշխարհքիս այլևայլ տեղերում բնակիչներում վրայ», ուստի «բնական, տնտեսական և բանասիրական գիտելեաց վրայ կը խօսինք»: Ապա ըստ այս բաժանման թվարկվում են այն գիտակարգերը, որոնց շրջանակում տարբեր համրամատչելի հոդվածներ պետք է մերկայացվեն ընթերցողին:

«Բազմավեպի» առաջին իսկ համարի հրատարակությանը հաջորդած արձագանքները վկայում են, որ ընթերցողները ևս այն համարում են ժողովրդի համար անհրաժեշտ գիտական նորությունների և ոչ թե հասարակական գաղափարների տարածող ու կարևորում են ամսագրի հենց այս ուղղությունը:

Միսիթարյան հայրերից Վարդան Հովսեփյանը, Իսլախիայի Նայսոց քաղաքում ստանալով «Բազմավեպի» առաջին համարը, Սոմալյան արքաինորը գրում է. «Ոչ մուազ խնդամ

ընդ այն, զի վաստակասեր երիտասարդ հարքն մեր վառեալ են ի մախանձ ծաւալելոյ զլոյս գիտութեանց և կենցաղօգուտ հմտութեանց ի մէջ ազգիս ըստ բարգաւաճեալ ազանց Եւրոպիոյ»<sup>6</sup>:

Այս տողերում միանգամայն ճիշտ է ըմբռնված և բնորոշված «Բազմավեպի» բուն մպատակը՝ ոչ թե ընդհանրապես գիտության և տեխնիկայի զարգացումը ներկայացնել, այլ «կենցաղօգուտ», այսինքն՝ նրանք, որոնք կիրառական նշանակություն կարող էին ունենալ հայկական կյանքում, և կամ էլ մնան գիտելիքներ հաղորդել նրանց, ովքեր շփվում էին Եվրոպայի հետ:

Միաբանության անդամները եթե անգամ դիտողություններ էլ են անում, ապա դրանք վերաբերվում են ոչ թե ամսագրի ուղղությունը փոխելուն, այլ պայմանավորված են այդ ուղղության մեջ այն ավելի կատարյալ և գեղեցիկ տեսնելու ձգտմամբ: Այսպես՝ Պոլսի Մխիթարյան վարժարանի տեսուչ Հ. Անանիա Շեղալյանը Եվրոպայում գտնվող իր միաբանակից եղբայրներին ասում է, որ նրանք ամսագրի հրատարակությանը պետք է օժանդակեն իրենց գտնված քաղաքներից «Մոխ գրութեամբ հրաշալեացն գոր տեսանէք յայսմ պանդխտութեան ձերում ի Գերմանիա, ի Գաղիա և յԱնգղիա, որպէս զդամբարան Նաբօլէոնի, զգրասուգակ ճամապարհն Լօնտրայու, զշոգեթոփչս անգղիացոյ ճարտարին, զարդարեալ պատկերօք փորագրելովք ի կապար կամ ի փայտ»<sup>7</sup>: Եվ շուտով, իսկապես, «Բազմավեպի» յուրաքանչյուր համարում սկսում են տպագրվել նյութեր Եվրոպայի նորօրյա հրաշալիքների մասին՝ համապատասխան նրանք փորագրանկարներով, որոնք ոչ միայն հիացնում են իրենց գեղեցկությամբ, այլև մնան մանրամասն դետալային գծագրմամբ ընթերցողին օգնում ճիշտ հասկանալու պատմվող շինության կամ սարքի ներքին կառուցվածքը և մեխանիզմը:

«Բազմավեպի» առաջին շրջանի շեշտված բնագիտական ուղղվածության մասին է վկայում և այն հանգամանքը, որ, ինչպես գրում է Ասատուր Փաշայանը, 1843-1880-ական թթ. ամսագրերում «Ֆիզիկային, քիմիային, աստղագիտությանը, հանքաբանությանը նվիրված հոդվածների թիվն անցնում է երեք հարյուրից»<sup>8</sup>:

«Բազմավեպի» առաջին շրջանի այս հոդվածներին սակայն բնորոշ է երկու էական առանձնահատկություն: Առաջին, մախ որ բնական գիտությունների և տեխնիկայի զարգացման ժամանակի վիճակին ժողովրդին ծանոթացնելը Մխիթարյանները կարևորում են ոչ միայն գործնական առումով, ազգային կյանքի զարգացման ու ժողովրդի վիճակի բարելավման տեսանկյունից, այլև այդ հոդվածներին հոգևոր դաստիարակչական խորհուրդ հաղորդում՝ գտնելով, որ բնական գիտությունների միջոցով մարդն առավել է հասու դառնում աստվածային Արարչագործությանը: Եվ երկրորդ՝ այս հոդվածներն իսկ սերտորեն կապված էին հայ միջնադարյան մատենագրությանը, ինչ-որ տեղ լինելով նաև շարունակությունը հայ հին գրականության և բնագիտական մտքի դասական ավանդների:

Պարզից դեպի բարդը, սկզբնական գիտելիքից դեպ իմացականությունն ու գիտականությունն ընթացքը լավագույնս արտացոլվել է հատկապես «Բազմավեպի»՝ Ալիշանի

<sup>6</sup> «Բազմավեպ», 1884 թ., էջ 61:

<sup>7</sup> Նույն տեղում:

<sup>8</sup> Ա. Փաշայան, Մխիթարյանների բնագիտական հրատարակությունները, «Բազմավեպ», 2001 թ., էջ 338:

առաջին շրջանի հողվածներում, որոնք մվիրված են բնական տարբեր երևույթներին: Այս հողվածներում հոգևոր վերափոխակերպումը հաճախ վերածվում է բանաստեղծական թոփշքի: Գիտական գյուտերը մեր համար իրենց բուն կիրառական մշակակությունից առավել կարևորվում են իմացական առումով, մարդու առջև մի մոր աշխարհ բացելով, ինչպես որ «Մանրացույցով տեսնում եմ բաներ» հողվածում է ասվում, շնորհիվ խոշորացույցի, մարդ կարծես թե «Նոր աշխարհք մըն ալ կը գտնէ առ աշխարհքիս մէջ», ուր ջրի կաթիլը «պայծառ մարգարիտ մը կերևնայ», իսկ լուսն՝ «կատաղի գազան մը... զրաբ հագած ու վրան գէնքեր առած»<sup>9</sup>:

Նույն ձևով «Արցունք» հողվածում մախ մերկայացնելով արցունքի քիմիական բաղադրությունը և առաջամալու հոգեֆիզիկական պատճառները, այնուհետև մա գրական մի անցում կատարելով դեպ բանաստեղծական աշխարհ, գեղարվեստական մի թոփշքով շարունակում է. «Բանաստեղծի մը առջև ան աղի կաթիլները մարդու աշխարհում եղած մէջ-մէկ ազնի մարգարիտներ են և ինչպէս աչքը մարդուս էն ազնիւ գարդն է, արցունքն ալ շատ անգամ աչքին ազնութիւնը կաւելցնէ»<sup>10</sup>:

Արցունքի մաս բանաստեղծական աշխարհին պատկանելն ասես ավելի շեշտելու համար այս հողվածից հետո Ալիշանը գետեղում է Լամարթիի «Արցունք» բանաստեղծությունը:

Հատկապես է, որ «Բազմավեպի» մեման հողվածների լեզուն առավել վեհ և հանդիսավոր է դառնում, երբ ասելիքը վերաբերվում է երկնայինին, որով և աստվածայինի հետ հարաբերվող հասկացություններին՝ տիեզերքին, աստղագիտությանը և հատկապես տոմարագիտությանը: Ալիշանը ևս մշտն է, որ այս թեմայով գրված նյութերի լեզուն պետք է ավելի բարձր լինի և տարբերվի մյուսներից: «Երկինք և աստեղք» հողվածում Ալիշանը շեշտում է, որ «Երկինքն է մեր երկրատր կենաց պատճառը ու յախտենական կենաց բնակարանը», որի մկարագրությանը չէր պատշաճի մյուս հողվածների հասարակ և պարզ լեզուն:

«Բազմավեպի» առաջին շրջանում բնական գիտություններին տրված առաջնությունը երևում է անգամ ամսագրի կառուցվածքից: Ինչպես որ անվանաթերթում այն անվանվում է «Բազմավեպ. օրագիր բնական, տնտեսական և բանասիրական գիտելեաց», այնպես էլ ամսագրի յուրաքանչյուր համար սկսվում է «Բնական գիտութիւն» խորագրի մերքո մերկայացվող և տարբեր գիտակարգերի և ուղղությունների վերաբերվող հողվածներով: Ամսագրի առաջին համարում «Բնական գիտութիւն» բաժնի մերքո մերկայացվում են երեք հողված: Նրանցից առաջինը՝ «Աստղաբաշխութիւն», մվիրված է արեգակի խավարմանը: Նրան հաջորդում է «Երկրաբանութիւն» խորագրի մերքո երկրաշարժին մվիրված «Գետնաշարժ» հողվածը: Այս բաժինը եզրափակվում է «Բնական պատմութիւն» խորագրի մերքո տպագրված «Մշկաբեր այծյամ» հողվածով:

Ամերածեշտ է մշել, որ ընդհանուր բնագիտական հասկացություններին վերաբերվող հողվածներն իրենց բնույթով եթե հոգևոր-բանաստեղծական խորհրդածությունների նյութ էին տալիս, ապա կենդանական ու բուսական աշխարհին, երկրաբանական ու աշխարհա-

<sup>9</sup> «Բազմավեպ», 1843 թ., էջ 82:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 176:

գրական կոմկրեմ հասկացություններին մվիրված հոդվածներն էլ արդեն ամփջականորեն կապվում էին հայոց աշխարհին և վկայակոչվում այդ թեմաներին մվիրված մատենագրական հիշատակությունները: Ասվածը լավագույնս արտահայտվել է հիշյալ «Բնական պատմություն» շարքում, որի հեղինակը ևս Ալիշանն է: Կենդանիների և բույսերի մրա այս նկարագրություններն ու բնորոշումները, իհարկե, անհամեմատ ավելի ընտիր լեզվով և շարադրանքի գեղարվեստականությամբ ու խորությամբ գտնում ենք մրա տեղագրական հատորներում:

«Մշկաբեր այծյամ» հոդվածում նկարագրելով, թե ինչ կարգաբանական դասակարգման է պատկանում այս կենդանին, որտեղ է այն տարածված և մուշկն ընդհանրապես ինչ բուծիչ հատկություններ ունի, այնուհետև խոսքը տեղայնացնելով և ուղղելով հայկական միջավայրին, հոդվածագիրը գրում է. «Հայաստանի Մշկունիք ըստած լեռը ատենով կա եղեր աս կենդանին ու լեռանը անումն ալ անկեց առնում կերևնայ, վասնզի խորենացին Հոփսիսմեանց պատմութեան մէջ կը գրէ թէ ելանեն Հայաստան գաւառ ի խորին խորշ լեռինն Մշկունեաց, ի սմա ասի այծեմունս մշկապորտս լինել»<sup>11</sup>: Այնուհետև ասում է, թե «շատ փափագելի էր իմանալ, թէ արդեօք Հայաստանում այժմ ևս կա այդ կենդանուց, թէ ոչ»:

Այս շարքի հոդվածներից մեկը մվիրված է Որդան կարմիրին, որը ոչ միայն առավելապես Հայաստանում էր տարածված և հռչակված, այլև մրանից ստացվում էր հայկական ձեռագրերի ամենաքնքեղ և ընտիր գույներից մեկը: Ահա այս պատճառով հոդվածի բուն կենդանաբանական քննությունը շատ ավելի արագ է ավարտվում, քան մյուս դեպքերում, և հեղինակը որոշակի կարգաբանական դասակարգմամբ մերկայացվող միջատի փոխաբեն գեղարվեստական մեծ մերձնչանքով և պատկերավորությամբ անդրադառնում է հայոց Որդան կարմիրին: Ինչպես հոդվածում է ասվում, «Թէ որ հայրենասէր մարդու համար քաղցր է իր հայրենեաց վրա լսած ինչ և իցէ տեղեկութիւնը, շատ անելի քաղցր պէտք է ըլլայ իրեն լսել ու խօսիլ մոյն հայրենեացը ան յատկութիւնները, որ օտարաց առջև ալ մեծ համարում ունին»<sup>12</sup>:

Հայաստանում այս որդի լինելու մասին որպես հնագույն վկայություն բերում է Պատմահորը վերագրվող «Աշխարհացույցի» այն տողը, որում ասվում է. «Ունի Այրարատ... և որդն յարմատոյ սիգոյ», որից հետո բերում է Փարպեցու Արարատյան դաշտի նկարագրությանը մվիրված նշանավոր հատվածը:

Արագիլը և կոռնկը գաղթաշխարհի հայության համար եղել են մաս հայրենիքի պատգամաբերները: Նույն այս ձևով արագիլն Ալիշանի համար ավելին է, քան սովորական թռչունը, ուստի վերջինիս մվիրված հոդվածում արագիլին բնորոշ հատկանիշները թվարկելուց և արտաքին նկարագրությունը մերկայացնելուց հետո մախ բարոյական տեսանկյունից է արժեվորում ու գնահատում՝ ասելով, թե ինչպես որ այս թռչուններն են իրենց ձագերին խնամում, այնպես էլ հետո ձագերն են մրանց պահում: Արագիլի այս հատկության մերկայացումը վկայակոչում է Փիլոն Եբրայեցու մեկ տողը, իսկ շարադրանքի վերջում էլ աս-

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 56:

սում է, թե այս թռչունը շատ սիրված է ման Հայաստանում, որը երևում է վաճառ կողմերում հյուսված մի խաղից»<sup>13</sup>:

Հավալուսնը առանձնակի խորհրդավոր գույներով ու հատկանիշներով է պատկերվել քրիստոնեական գրականությունում: Քրիստոնեական խորհրդաբանությամբ զուգահեռ է անցկացվել Քրիստոսի հետ, ինչպես որ Փիլոն Եբրայեցուց սկսած կենդանիների բնական շատ հատկանիշներ են հոգևոր վերափոխաստվորումների ենթարկվել: Հավալուսնի մասին ասվում է, թե մա կտուցով ծակում է իր կողը և բխած արյամբ կերակրում ձագերին: Այս ավանդության հիման վրա ասվում է, որ ինչպես Քրիստոսի խոցված կողից թափված արյամբ հիմնվեց ու սնվեց քրիստոնեական Եկեղեցին, այնպես էլ այս թռչունն է իր արյամբ սնում իր ձագերին: Ընդհանուր քրիստոնեական խորհրդաբանությունում տարածված այս ըմբռնման հնագույն արտահայտություններից մեկը հայ արվեստում գտնում ենք «Էջմիածնի Ավետարանի» մկրտության մանրանկարներում<sup>14</sup>:

Միջնադարից եկած այս պատկերացումը շարքի հավալուսնին նվիրված հոդվածում ներկայացվում է վարդան Արևելցու «Ժղլանքի» որոշակի վերամեկնաբանմամբ, թե ինչպես է հավալուսնը իր կտուցի պարկում պահում իր մահացած ձագին, ապա մրա վրա արյուն ցողելով կենդանություն պարգևում:

Վերջում, սակայն, հոդվածագիրն ասում է, թե գիտությունն ապացուցել է, որ այդպիսի բան գոյություն չունի<sup>15</sup>:

«Նապաստակ և ճագար» հոդվածում էլ բնական հատկությունների նկարագրությունից հետո բերվում է ման մապաստակի վախկոտության մասին Ուիմպիանուսի առակը գրաբար թարգմանությամբ՝ մշտելով, որ հույն առակագրի այս փոքրիկ ստեղծագործությանը «թարգմանությանը գեղեցկությունն ալ մոր աղոթությունն մը տուած է» և պատմվում է այն առակը, թե ինչպես մապաստակներն իրենց վախկոտությունից ամաչելով որոշում են ջուրը նետվել, և երբ մոտենում են ջրին, ափին եղող գորտերը ջուրն են նետվում, և այդ տեսնելով, մապաստակներից մեկն ասում է, թե սպասե՛ք՝ գորտերը մեզանից վախկոտ են<sup>16</sup>:

Բնական և «կենցաղօգուտ» տարբեր գիտություններին նվիրված հոդվածները երբեմն ամենամասնապասելի, սակայն և վարպետ անցումներով են կապվում Հայաստանի հետ հայ մատենագրությունից կատարված զուգահեռներով և վկայակոչումներով:

Այսպես՝ երկրագործության պատմությանը նվիրված մի հոդվածում ասվում է, թե հայերը ծաղկեցրել են իրենց երկիրը, և որպես ասվածի հավաստում վկայակոչվում է Սամատրուկի որդի Արտաշեսի մասին Պատմահոր խոսքերը, թե մրա ժամանակ «ոչ գտանել երկիր անգործ յաշխարհիս Հայոց, ոչ լեռնային և ոչ դաշտային»<sup>17</sup>: Հայաստանում երկրագործական մշակույթի բարձր զարգացման արտահայտությունն է համարվում ման «Վաստակոց գրքի» հայերեն թարգմանությունը:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 111-112:

<sup>14</sup> Այս մասին տե՛ս Ս. Տեր-Ներսեսյան, Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975 թ., էջ 61:

<sup>15</sup> Տե՛ս «Բագմավեպ», 1843 թ., էջ 27-28:

<sup>16</sup> Տե՛ս մույն տեղում, էջ 66:

<sup>17</sup> Նույն տեղում, էջ 60:

Եթե մկատի ունենանք հայ հին գրականության ուսումնասիրման և բնագրերի հրատարակության վիճակը 1840-ական թվականներին, ապա այս հոդվածների մասն վկայակոչումները կարելի է համարել այս բնագավառում կատարված առաջին քայլերից մեկը:

Ի տարբերություն, սակայն, բնագիտական հոդվածների, «կենցաղօգուտ» նշանակություն ունեցող կիրառական հոդվածներն արդեն գրված են պարզ և հասարակ ոճով, որովհետև բնագիտությունը և բնական գիտությունները միջնադարից եկող ավանդույթով կապվում էին արարչագործության ու հոգևոր խորհուրդների հետ, իսկ կիրառական գյուտերն արդեն մարդկային մտքի արգասիքն էին և ծառայում էին առօրյա կյանքին: «Բազմավեպի» առաջին շրջանի մասն բազմաշերտ և լայն ընդգրկման մասին ամսագրի երկրորդ շրջանի խմբագիրներից Մխիթարյան միաբանության հմի և նորի սահմանագծին գտնվող հանրագիտակ հայագետներից Հ. Սիմեոն Երեմյանի բնորոշմամբ, հանդեսի մեջ «ամփոփուած էր գիտութիւնն իր ամէն ճիւղերով, արհեստները, գիւղական և տնտեսական ուսմունքը, տիեզերական ծամօթութիւնը, հայ և օտարազգի պատմութիւն և գրականութիւն, աշխարհագրական և քաղաքական տեղեկութիւններ, մանրալուրջ և վէպեր»<sup>18</sup>:

«Բազմավեպում» գիտության և տեխնիկայի մասին «կենցաղօգուտ» գիտելիքները, ըստ Երեմյանի, ներկայացրել են Հ. Մանվել Բաշունին, Հ. Օքսենտիոս Գուրգենյանը և Հ. Տիմոթեոս Թմկրյանը: Մանվել Բաշունու այս հոդվածները դարձել են ատաղձը նրա հոչակավոր և հայ իրականությունում մինչև այսօր անգերազանցելի եռահատոր բառարանի<sup>19</sup>:

Նաև ոչ միայն «Բազմավեպում» տպագրված հոդվածներն են դառնում ատաղձները մխիթարյան հեղինակների հետագա հիմնարար հրատարակությունների, այլև ամսագրի հրատարակությանը մախորդող շրջանի համաբնույթ տպագրություններն են օգտագործվում պարզեցված և համառոտված հանրամատչելի շարադրանքով, որի ընթացքում բերվում են այդ հրատարակությունների փորագրանկարները ևս:

Այսպես, 18-րդ դարի վերջին քառորդում, երբ Մոնգոլիֆերի եղբայրները ստեղծեցին օդապարիկ գունդը, Մխիթարյաններն իսկույն արձագանքեցին 1785 թ. Հ. Եղիա Էմտազյանի հրատարակած «Համառօտ պատմութիւն օդապարիկ գնտոյ» փոքրիկ գրքուկով, որում նկարագրվում է այն և բացատրվում թռչելու և գործածության եղանակը: Այնուհետև երբ սկսվում է հրատարակվել «Բազմավեպը», ամսագրում այս գրքուկի հիման վրա մի փոքրիկ հոդված է նվիրվում օդապարիկին:

Հովհաննես ամիրա Տատյանը մի որոշակի գումար էր հատկացրել երեք տարի «Բազմավեպը» հրատարակելու համար, որով էլ այն սկսում է լույս տեսնել: Ահա այս պատճառով էլ 1843-45 թթ. համարվում է ամսագրի առաջին շրջանի առաջին ենթաշրջանը: Երբ այն լրանում է, միաբանությունը որոշում է շարունակել ամսագրի հրատարակությունը: Այս մասին 1845 թ. վերջին համարում լույս տեսած խմբագրականում ասվում է, որ թեև եռամյա այդ շրջանի համար էր նախատեսված «Բազմավեպը», սակայն ամսագրի գտած

<sup>18</sup> Հ. Ս. Երեմյան, «Բազմավեպ» և իր խմբագիրներն, «Բազմավեպ», 1902 թ., էջ 203:

<sup>19</sup> Տե՛ս Հ. Մ. Բաշունի, Բաղդիք արուեստից և գիտութեանց և գեղեցիկ դպրութեանց, հատոր Ա-Գ, Վեմեսիկ, 1891-1893 թթ., 2325 էջ:

ընդունելությունը գերազանցեց իրենց բոլոր սպասելիքները, և որոշեցին շարունակել հրատարակությունը<sup>20</sup>:

Հաջորդ տարվանից, սակայն, ամսագիրը կրում է կառուցվածքային մի էական փոփոխություն, որն արտացոլվում է հենց անվանաթերթում, որով այն սկսում է անվանվել «բարոյական, բանասիրական, տնտեսական և բնական»: Նույն ձևով, ամսագրի համարներն արդեն սկսվում են ոչ թե «Բնական գիտություն», այլ «Բարոյական» ընդհանուր խորագրի ներքո գետեղված և ազգային կրթությամբ ու դաստիարակությամբ մշակված հոգևածնները, որոնց հաջորդում են բարոյա-խրատական մյուսերը և պատմությունները, ապա վերջում մոր՝ բնական գիտությունները:

Ամսագիրը, սակայն, միայն կառուցվածքային փոփոխություն չէ, որ կրում է: Առաջին եռամյան համարելով մտավոր կաթը «ջամբելու» մախապատրաստական շրջան, հաջորդող տարիներին բոլոր բաժինների մյուսերը զրուցախառն պարզ մկարագրություններից աստիճանաբար դառնում են բացատրական, ապա և տեսական ու քննական:

Այս ընթացքը բավականին յուրօրինակ ձևով է արտահայտվել հատկապես բնագիտական հոդվածներում: Առաջին տարիներին եթե Մինիսթարյանները գրում էին, թե ինչ զարմանալի գյուտեր են տեղի ունենում և ինչեր են պատրաստվում Եվրոպայում, ապա հաջորդող տարիներին բացատրում են, թե այդ ամենն ինչպես է տեղի ունենում, ֆիզիկամաթեմատիկական և քիմիական ինչ օրենքներով: Ընդհանուր գիտելիքներից դեպ երևույթների բացատրությունը տանող այս ճանապարհով 1860-80-ական թթ. «Բազմավեպ» արդեն մասնագիտական բնույթի հոդվածներ էր տպագրելու անգամ տարրական մասնիկների և պարբերական էլեմենտների մասին՝ այդ ամենը մերկայացնելով համապատասխան գծապատկերներով:

Զարգացման մույն այս ընթացքն էին ունենալու և հայ հին գրականությամբ մշակված հոդվածները և ուսումնասիրությունները, որոնցում մեր մատենագրությունից բերված օրինակները սկզբնապես ծառայեցվելու էին դաստիարակչական մպատակներին և անգամ մույն «կենցաղօգուտ խրատներին», ապա և ազգային ինքնագիտակցությամբ ու ինքնաճանաչմամբ՝ 1870-ական թվականներից դառնալով հայագիտական հետազոտություններ Մինիսթարյան ավանդական բանասիրության շրջանակում:

<sup>20</sup> «Բազմավեպ», 1845 թ., Յառաջաբան, էջ 3-4: